ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2014թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 509-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 18-ի «Սննդամթերքի և սննդային հավելումների փորձաքննության նմուշառման կարգը հաստատելու մասին» N 509-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում և ամբողջ տեքստում «սննդամթերքի և սննդային հավելումների», «սննդամթերքի կամ սննդային հավելումների» բառերը և դրանց հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «սննդամթերքի, անասնակերի, սննդային և կերային հավելումների», «սննդամթերքի, անասնակերի, սննդային կամ կերային հավելումների» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) նախաբանում «կետի» բառը փոխարինել «և «Անասնակերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետերի» բառերով.

3) որոշման հավելվածի՝

ա. երրորդ բաժնի վերնագրում «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ» բառից հետո լրացնել «,ԱՆԱՍՆԱԿԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ» բառերը,

բ. 33-րդ կետում «մարդու» բառից հետո լրացնել «կամ կենդանու» բառերը,

գ. 37-րդ կետի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ցանկի 32-րդ տողում «ժմեխ» բառը փոխարինել «քուսպ» բառով, իսկ «շրոտ» բառը՝ «աղացած քուսպ» բառերով,

դ. 37-րդ կետի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ցանկում 43-րդ տողից հետո լրացնել հետևյալ տողերը.

«44.	ԳՕՍՏ 13496.0	Համակցված կերեր, հումք. Նմուշառման մեթոդներ		համակցված կերեր, պրեմիքսներ, սպիտակուցա-վիտամինային և ամիդովիտամինային հավելում-ներ, կարբամիդային խտանյութ և հումք՝ դրանց արտադրության համար՝ կարբամիդ, կենդանական ծագման ալյուր, ձկնային և ծովային կաթնասուն-ներից և խեցգետնակերպերից ստացվող

			ալյուր, կերային խմորիչներ, շաքարի արտադրության մնացուկներ, խոտալյուր, վիտամինային կանաչ ալյուր, կերային ալյուր, խաղողի մզուկից ստացված կերային ալյուր, չոր եգիպտացորենա՝ին կերեր
45.	ԳՕՍՏ 27262	Բուսական ծագման կերեր. Նմուշառման մեթոդներ	կանաչ կերեր, խոտ, ծղոտ, սիլոս, սենաժ, արհեստական չորացրած կերեր՝ խոտից
46.	ԳՕՍՏ 20083	Կերային խմորիչներ. Տեխնիկական պայմաններ	կերային խմորիչներ
47.	ԳՕՍՏ 20438	Ջրիմուռներ, ծովային խոտեր և դրանց վերամշակումից ստացված արտադրանք. Ընդունման կանոններ. Որակի գնահատման զգայորոշման մեթոդ. Լաբորատոր փորձաքննության համար նմուշառման մեթոդներ	ջրիմուռներ, ծովային խոտեր և դրանց վերամշակումից ստացված արտադրանք
48.	ԳՕՍՏ 28736	Կերային արմատապտուղներ. Տեխնիկական պայմաններ	կերային, շաքարային և կիսաշաքարային՝ճակնդեղ, գոնգեղ, գազար և շաղգամ
49.	ԳՕՍՏ 17536	Կենդանական ծագման ալյուր. Տեխնիկական պայմաններ	կենդանական ծագման ալյուրներ՝ նախատեսված համակցված կերերի արտադրության և թռչունների ու անասունն՝ի կերակրման համար
50.	ԳՕՍՏ 28189	Ոսկրային կիսաֆաբրիկատ. Տեխնիկական պայմաններ	ոսկրալյուրի կիսաֆաբրիկատ՝ նախատեսված չոր կենդանական կերերի ու համակցված կերերի արտադրության և թռչունների ու անասունների կերակրման համար

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ